Տեկացնում եմ Ձեզ, որ պետական սահմանի մասին ՀՀ օրենքի 2-րդ գլխի 5-րդ հոդվածի համաձայն «Պետական սահմանի տեղորոշումն ու փոփոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենքով»:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ չկա միջպետական որևէ փաստաթուղթ, որով իրականացվում է Հյաստանի Հանրապետության և Ադրբեջանի հանրապետության սահմանների սահմանազատում ու սահմանագծում, որևէ տեղեկություն ընթացող գործընթացի մասին չի հաղորդվում, խնդրում ենք պարզաբանել, թէ ինչու դեռ չի ստեղծվել սահմանազատման և սահմանների ճշտգրտման աշխատանքներն իրականացնող հանձնաժողով, որը կքննարկեր այդ թվում բազմաթիվ մասնագիտական հարցեր, առանց որի անհնար է ճիշտ կատարել սահմանազատման ու սահմանների ճշտգրտման աշխատանքները:

Հայտնում եմ նաև, որ 16 նոյեմբերի 2000 թվականին ՀՀ վարչապետի N 763 որոշմամբ «ՀՀ պետական սահմանի սահմանագծման ու սահմանազատման աշխատանքների կազմակերպման նպատակով» ստեղծվել է հանձնաժողով, և այդ որոշմամբ հաստատվել է դրա անհատական կազմը: